

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ հոդվածի 4-րդ մասերը, 17-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետը, 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը և «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. սեպտեմբերի 8-ի N 1986-Ն և 2005թ. սեպտեմբերի 15-ի N 2114-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 27 հուլիսի 2006թ. N 1183-Ն որոշումը՝ Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 6 նիստի որոշմամբ հաստատված «Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցելու» կարգը:
2. Հաստատել «Գավառի պետական համալսարանի ուսանողների ուսման վարձը վճարելու և վարձն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու» կանոնակարգը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել «Գավառի պետական համալսարանի ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի 31-րդ կետի փոփոխությունը՝ համաձայն հավելված 2-ի:

ԳՊՀ գիտական խորհրդի նախագահ

Ռ. Բ. Հակոբյան



Հավելված 1

Հաստատված է

Գավառի պետական
համալսարանի գիտական խորհրդի
2014թ. հունվարի 16-ի թիվ 1 նիստում

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՒ ՎԱՐՁՆ

ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՄԲ ԿԱՄՍԱՍԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ուսանողների ուսման վարձը վճարելու, ուսանողական նպաստի ձևով ուսանողների ուսման վարձը փոխհատուցելու սկզբունքները, կարգավորում փոխատեղման և մասնակի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները:
2. Համալսարանի ուսանողներն ուսման վարձը վճարում են Համալսարանի հետ կնքված պայմանագրով սահմանված չափով՝ կիսամյակների կամ ուսումնական տարվա համար ամբողջությամբ կամ մաս-մաս՝ ամսական վճարման կարգով, կանխիկ կամ փոխանցումով:
Կանխիկ վճարում կատարած ուսանողին սահմանված կարգով տրվում է հսկիչ-դրամարկղային կտրոն:
3. Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կուրս ընդունված և առաջին կիսամյակի ուսման վարձը մինչև դասերի սկիզբը չվճարած անձինք չեն հրամանագրվում, այլ ժամանակավորապես կցագրվում են համապատասխան կուրսին:
4. Ժամանակավոր կցագրում ստացած անձինք դասերը սկսվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, վարձը վճարելու դեպքում հրամանագրվում են առաջին կուրս, իսկ չվճարելու դեպքում՝ ֆինանսական պարտավորությունը չկատարելու համար

հեռացվում Համալսարանից, բացառությամբ զինվորական ծառայության հիմքով տարկետում ստացած անձանց:

5. Համալսարանի առկա ուսուցման ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողները երկրորդ կիսամյակի ուսման վարձը, ինչպես նաև երկրորդ և բարձր կուրսերի ուսանողները ուսման վարձը վճարում են դասերի մեկնարկից առաջ կամ հետո՝ մինչև միջանկյալ քննությունների սկիզբը:

Նշված ժամանակահատվածում ուսման վարձը չվճարած ուսանողները զրկվում են միջանկյալ քննությունը (քննությունները) հանձնելու, ինչպես նաև մինչև վճարումը չհանձնած միջանկյալ քննությունները վերահանձնելու իրավունքից:

6. Համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողներն ուսման վարձը վճարում են դասերի մեկնարկից առաջ կամ հետո՝ 10-օրյա ժամկետում:

7. Ուսանողների ուսման վարձը կարող է փոխհատուցվել ամբողջովին և մասնակիորեն՝ պետական բյուջեի, կամ (և) Համալսարանի միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին՝ ընդունելության մրցույթի արդյունքների, ուսանողների սոցիալական վիճակի, բարձր առաջադիմության և հասարակական ակտիվության արդյունքների հաշվառմամբ:

8. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրամադրվում է.

1/ընդունելության մրցույթի արդյունքներով ամենաբարձր միավորներ վաստակած ուսանողներին՝ այն մասնագիտությունների գծով, որոնցով հատկացվել են անվճար տեղեր,

2/մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ անվճար տեղեր ունեցող մասնագիտությունների գծով, մրցութային կարգով՝ փոխատեղման (ռոտացիայի) սկզբունքով,

3/առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան ուսանողներին,

4/1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողներին,

5/զոհված զինծառայողների երեխա-ուսանողներին,

զ/պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին:

9. Յուրաքանչյուր ուսումնական տարի պետության կողմից ըստ Համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտությունների հատկացված անվճար տեղերի ուսման վարձի ամբողջովին փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների քանակն անփոփոխ է և տեղափոխվում է կուրսից կուրս:
10. Ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) Համալսարանի առաջին կուրս ընդունված ուսանողները հաջորդ կուրսերում պահպանում են իրենց անվճար սովորելու իրավունքը միայն բարձր առաջադիմության դեպքում՝ փոխատեղման մրցույթի արդյունքներով:
11. Փոխատեղման մրցույթը կազմակերպվում է նախորդող ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ընթացքում ուսանողների հանձնած ստուգարքների և քննությունների գնահատականների տարեկան միջին ցուցանիշի կամ տարեկան միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) հիման վրա (հարյուրերորդականի ճշգրտությամբ):
12. Ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում ուսման վարձի լրիվ փոխհատուցում 2-րդ կուրսում տրվում է 1-ին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով Համալսարանում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:
13. Սույն կանոնակարգի 12-րդ կետում նախատեսված ցուցանիշների հավասարության դեպքում փոխատեղման մրցույթն անցկացվում է նախորդ ուսումնական տարվա երկու կիսամյակների ընթացքում ուսանողների հանձնած քննությունների (կուրսային աշխատանքների) գնահատման նիշերով: Վերջիններիս հավասարության դեպքում իր կարգավիճակը պահպանում է նախորդ ուսումնական տարում անվճար տեղում սովորած ուսանողը:

- 14.Թափուր տեղեր առաջանալու դեպքում փոխատեղման մրցույթն անցկացվում է լուծարային շրջանի արդյունքներով՝ նախապատվությունը տալով առարկայական պարտքերի մարման առաջին շրջանում քննությունները հանձնած հավակնորդ ուսանողներին:
- 15.Տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած, ապա վերականգնված, այլ բուհերից կամ Գավառի պետական համալսարանի այլ մասնագիտություններից տեղափոխված ուսանողները նպաստներից կարող են օգտվել տվյալ մասնագիտությամբ մեկ ուսումնական տարի սովորելուց հետո:
- 16.Փոխատեղման մրցույթին մասնակից ուսանողների ցուցակը ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում է ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի քննարկմանը: Մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ կուրսի, տվյալ մասնագիտությանը հատկացված նպաստների թվաքանակի, իրականացնում է մրցույթ և կազմում նպաստառու ուսանողների ցուցակը, որը պարտադիր վավերացվում է մանդատային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Ցուցակի կազմման համար ձևակերպվում է արձանագրություն (2 օրինակից), որտեղ պարտադիր կարգով գրանցվում են մանդատային հանձնաժողովի անդամների կարծիքները և հնարավոր վերապահումները: Արձանագրությունը ստորագրվում է մանդատային հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:
- 17.Ցուցակները և արձանագրությունները համապատասխան ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում են Համալսարանի մանդատային հանձնաժողովի քննարկմանը և հաստատմանը: Համալսարանի մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները հրապարակվում են ֆակուլտետներում, ինչպես նաև տեղադրվում Համալսարանի համացանցային կայքէջում: Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները եռօրյա ժամկետում պետք է ներկայացվեն Համալսարանի մանդատային հանձնաժողովին: Հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները, հաստատում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական ցուցակները և ներկայացնում Համալսարանի ռեկտորին՝ հրամանագրման: Ռեկտորի հրամանով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների հրամանագրումից հետո ուսանողների այլ ուսումնական հաստատություն կամ այլ մասնագիտություն փոխադրվելու, ինչպես նաև

Համալսարանից ազատվելու դեպքերում ազատված ուսանողական նպաստներն այլ ուսանողների չեն տրամադրվում:

18. Համալսարանի ռեկտորի հրամանում պարտադիր կարգով նշվում է նպաստի տրամադրման ժամկետը՝ տվյալ տարվա սեպտեմբերից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը:

19. Սույն կանոնակարգի 16-րդ կետում նշված ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի խախտումներ հայտնաբերելիս՝ Համալսարանի մանդատային հանձնաժողովն իրավասու է տվյալ մասնագիտության նպաստառուների ցուցակը հետ վերադարձնել տվյալ ֆակուլտետ՝ նոր մրցույթի կազմակերպման պահանջով: Սխալներ և ընթացակարգային խախտումներ թույլ տված անձինք ենթակա են կարգապահական տույժերի, որոնք ձևակերպվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:

20. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ առնվազն 20%-ի չափով, կարող են ստանալ բակալավրիատում առավելագույն ՄՈԳ-ի 75%-ի շեմը և մագիստրատուրայում՝ 80%-ի շեմը հաղթահարած այն ուսանողները, ովքեր ունեն հետևյալ կարգավիճակները.

1/ սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներ են,

2/ 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներ են,

3/ մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներ են,

4/ երեք և ավելի անչափահաս կամ Համալսարանում երեք և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներ են,

5/ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներ են,

6/ մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներ են,

7/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ունեցողների զավակներ են,

8/Համալսարանի աշխատակիցների երեխա-ուսանողներ են,

9/բացառիկ դեպքերում՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողները:

21. Համալսարանում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում (գեղչ) ստանալու մասին դիմումներն ընդունվում են սկսած յուրաքանչյուր տարվա օգոստոսի 15-ից:

22.Դիմումների հետ ներկայացվում են սույն կանոնակարգի 8-րդ և 20-րդ կետերում նախատեսված տարակարգերին պատկանելու մասին համապատասխան փաստաթղթերը (սոցիալական ապահովության մարմնի, բժշկական հանձնաժողովի և այլ տեղեկանքներ), ՄՈԳ-ի սահմանված շեմը հաղթահարելու մասին համապատասխան ֆակուլտետի դեկանի զեկուցագիրը, ուսանողական խորհրդի միջնորդությունը, այլ փաստաթղթեր:

23.Նախորդ ուսումնական տարվա (տարիների) ամփոփիչ ատեստավորման քննությունից (քննություններից) կամ (և) ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պաշտպանությունից անբավարար գնահատական ստացած, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման քննությանը կամ ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պաշտպանությանը չներկայացած անձինք վերականգնվելու դեպքում յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման քննությանը կամ (և) ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պաշտպանությանը մասնակցելու համար վճարում են 20.000 ՀՀ դրամ:

24.Համալսարանից հեռացված կամ ազատված անձանց կողմից մինչ այդ վճարված ուսման վարձը հետ չի վերադարձվում և վերականգնվելիս՝ հաշվի չի առնվում: Նրանց հետ սահմանված կարգով կնքվում է նոր պայմանագիր՝ նոր վարձաչափի նշումով:

25.Ուսանողական իրավունքները վերականգնած և ակադեմիական տարբերություններով ու առարկայական պարտքերով պայմանավորված ուսումնական տարին կրկնող ուսանողները վճարում են ուսման վարձ՝ Համալսարանի հետ կնքված նոր պայմանագրով սահմանված չափով:

26.Մինչ ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ կիսամյակի սկիզբը ուսումնական վարձը վճարած, դասերին չմասնակցած և Համալսարանից ազատման մասին դիմում ներկայացրած անձանց վարձը ենթակա է հետ վերադարձի՝ 10% պահումով:

27. Համալսարանի մի ֆակուլտետից (բաժնից) մյուսը տեղափոխվելու, այլ բուհերից Համալսարան տեղափոխվելու, երկրորդ մասնագիտություն ստանալու, շարունակական կրթության կարգով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները ավարտելուց հետո Համալսարանում ուսումը շարունակելու մասին դիմում ներկայացրած անձինք առարկայական տարբերությունների հանձնման, այլ ակադեմիական առաջադրանքների կատարման գործընթացը կազմակերպելու համար Համալսարանին նախապես վճարում են իրենց ընտրած մասնագիտական բաժնի համար սահմանված կիսամյակային ուսման վարձի 10%-ը, որը հետ չի վերադարձվում, եթե անձը առարկայական տարբերությունները չի հանձնել, այլ ակադեմիական առաջադրանքները չի կատարել և չի հրամանագրվել:

28. Սույն կանոնակարգի 26-րդ կետն ուժի մեջ է մտնում 2014-2015 ուսումնական տարվանից: